

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԵՐՈ

ՀԱՅՐԵՆԻ ԱՓ

Գարուն ու մայիս, հովեր աստղազանգ,
Օղը բուրուն է սադափե հանգեր,
Բլրի վրա հնամյա մի վանք,
Վանքում՝ հեկեկող խաչքար ու զանգեր:

Ամպերի մոտ է Արագածը, տե՛ս,
Կհառնի շուտով և Հայոց Արան,
Կռունկների չուն երազների պես՝
Հեռացող թախիժ, հեռացող շարան:

Եվ նորից, նորից սուրուն ենք թեթև,
Ապարանն անցանք, Քուչակն է գալու,
Սառնորակ ջրեր, որ աջ ու ձախից
Իմ ջահելության կարոտն են լալու:

Արայի լեռան աստղոտ փեշերին
Ծաղկունքի ծովն է հորձանքին տալիս,
Հավքեր են գնում դեպի Բյուրական
Եվ Բյուրականից հավքեր են գալիս:

Եվ օրը նորից բուրուն է լցված,
Եվ օրը նորից հյուսուն է հանգեր:
Բլրի վրա հնամյա մի վանք,
Վանքում՝ հեծեծող խաչքար ու զանգեր:

ԷԼԵԳԻԱ

Փոքրիկ մի հող, փոքրիկ բլուր,
Ե՞րբ է եղել, այս ի՞նչ տեսա,
Օրորուն են մտքերն ինձ լուռ,
Հոգնած իմ հին շիրիմն է սա:

Շրջանակի ճաղերն արդեն
Հնացել են ու ժանգոտվել,
Իսկ ես անտեր այս մայթերին
Ինչ-որ տողեր են հանգոտել:

Թողել են մեր տունը լքված,
Հիմա գուր են աղաղակում,
Ի՞նչ իմանար Գիքորը խեղճ,
Որ բազազներ կան քաղաքում:

Ո՞նց հասկանար, որ իրենից
Բախտն է անդարձ նահանջելու,
Ու ջերմի մեջ զառանցելով
Սառը ջուր է պահանջելու:

Կանգնել են լուռ. հոգս է ու ցավ,
Բարակ սուգ է բերուն քամին,
Իմ խեղճ արյուն, արևն անցավ,
Քնիր գոնե տարածամին: